

Արման Ա. Մակարյան

«ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՆՔԸ*

Բանալի բառեր – գենդերային դաստիարակություն, ընթերցող երեխա, մանկական մամուլ, պատկերներ, աղջիկներ, տղաներ, կենսաբանական սեռ, ֆիզիկական տարբերություններ, դերային ներթափանցումներ:

Մուտք

19-րդ դարում նկարագարդու՛մը դարձավ գրքերի և ամսագրերի անբաժանելի մասը: Լոնդոնը այս բնույթի հրատարակչության կենտրոն էր: Աշխարհի խոշոր քաղաքների գրախանութներում վաճառվում էին զանազան փորագրություններով, նկարներով, աշխարհագրական քարտեզներով մեծածավալ գրքեր: Այս հարուստ շուկայում ամսագրերի հրատարակիչներն իրենց հայեցողությամբ ընտրում էին համապատասխան նկարագարդու՛մներ՝ դրանք տեքստով մեկնաբանելու, երբեմն էլ պատրաստի տեքստերը նկարներով հավելելու համար: Այս բնույթի որոնումը, սակայն, հանգեցրեց նրան, որ նկարագարդու՛մը ձեռք բերեց ինքնուրույն նշանակություն:

19-րդ դարի կեսին հայտնվեցին ժանրի նոր տեսակներ՝ ամսագրերի պատկերագարդու՛մներ, մանկական գրքի նկարագարդու՛մներ: Հայկական ամսագրերը հետևում էին արևմտավրոպական արվեստագետների կողմից նկարագարդու՛մների օգտագործման ուղուն՝ իրենց հրատարակություններում երբեմն արհեստականորեն ու անտեղի օգտագործելով նկարները: Այնուամենայնիվ, ուշագրավ է, որ նույնիսկ արտասահմանյան վարպետների անորակ ստեղծագործությունների պատճենները ժամանակակիցների համար բավական հասկանալի էին ու տպավորիչ:

Նկարն ընկալվում էր ոչ միայն որպես տեքստի մեկնաբանություն, այլև թեմայի նշանաբան, և դրա հետագա զարգացում, ինչն ընդլայնելով ընթերցողների ընկալման շրջանակը, ինքնին լրացնում ու ընդլայնում էր նաև տեքստը: Այս տեսակետից բավական հետաքրքրական նյութ է պարունա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.04.2019:

կում 19-րդ դարում հրատարակված հայկական մանկական առաջին պարբերականը՝ «Թատրոն. բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթը, որը տպագրվում էր 1876-1878-ին Կոստանդնուպոլսում: Առաջին տարին մանկական հանդեսը խմբագրել է մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը, որին հաջորդել են խմբագիրներ Կ. Եազմաճյանը և Ս. Ղ-ն: Պարբերականի ստեղծման առաջին կենսական շարժառիթը «Ավետաբեր տղայոց համար» (1872-1915) բողոքականների մանկական հանդեսն էր, որի խմբագիրները (Է. Բլիս, Զ. Գրին, Հ. Բարնըր, Հ. Ալեն և ուրիշներ) ջանում էին մանուկ ընթերցողների շրջանում հավատ սերմանել դեպի բողոքական եկեղեցին: Նրանք «դաստիարակության հարցում մեծ դեր էին հատկացնում վախի գործոնին և խաղալով երեխաների երևակայության հետ՝ սարսափի միջոցով փորձում էին հետ պահել նրանց այս կամ այն «արտասովոր» երևույթից»¹: Վախի ազդեցությունը որդեգրելով որպես դաստիարակության բանալի՝ նրանք ձևավորում էին իրենց պարբերականը՝ սարսափ հարուցող երկեր ու նկարներ հրատարակելով:

Հիմնովին այլ էր «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ընտրած ուղին: Պարոնյանը և մյուս խմբագիրները մանուկ ընթերցողներին ընթերցանության այլընտրանքային տարբերակ էին մատուցում՝ այն դնելով ազգային դաստիարակության հենքի վրա և տպագրելով ոչ թե սարսափելի, այլ «գեղեցիկ պատկերոք», որոնք «բարոյականի մասին՝ լաւ խրատներ ու յորդորներ»² էին տալիս ընթերցողներին:

1. Կերպավորում՝ սեռական տարանջատման հիման վրա

Հրատարակության գեղարվեստական դիզայնը, ինչպես նաև դրա գրական մասը հիմնականում լցված էր տեղեկատվական բովանդակությամբ ու ծառայում էր ընթերցողի հայացքների ընդլայնմանը: Էթնոգրաֆիկ, աշխարհագրական, գրական և պատմական նյութերը ներկայացվում էին նկարազարդումների թեմաներով: Հաճախ էին օգտագործվում արևմտաեվրոպական արվեստագետների ստեղծագործությունների վերարտադրությունները, շատ նկարներ տպագրվում էին առանց ստորագրության:

Քննելով պարբերականում հրատարակված գեղարվեստական և ուսուցողական ստեղծագործությունները ազգային և գենդերային դաստիարակության տեսանկյունից՝ գրականագետ Ա. Սողոյանը գրում է. «Եվ անհատական գործերի, և՛ այլ հեղինակներից կատարած փոխադրությունների ենթաշերտում հեղինակը դնում է ազգային և դրանից բխող ու դրան համապատասխան գենդերային դաստիարակության գանազան խնդիրներ, գեղարվեստի ու կերպարվեստի լեզուն դարձնելով նշանային յուրօրինակ համակարգ՝ ազդում ընթերցող երեխաների հոգեբանության վրա և ոչ ուղղակիորեն՝ քողարկված բանաձևերով կառուցում ապագայի հասարակության իր տեսլականը»³: Երիտասարդ գրականագետը նկատում է, որ պար-

1 **Մակարյան Արման**, Հայկական վաղուց մոռացված մանկական մի պարբերականի «տարօրինակ» նկարազարդումները («Ավետաբեր տղայոց համար»), «Հայագիտական հանդես», 2018, N 3 (41), էջ 238:

2 «Թատրոն. բարեկամ մանկանց», կիսամյա պատկերազարդ հանդես, Կ. Պոլիս, 1876, N 2, էջ 16:

3 **Սողոյան Ա. Վ.**, Դաստիարակության խնդիրները Հակոբ Պարոնյանի մանկական պարբերականում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, N 3 (27), էջ 24:

բերականում կերպավորված աղջիկ ու տղա հերոսները չունեն նույն գործառույթները և տարբեր հարթություններում տարբերվում են միմյանցից: Իր ուսումնասիրությունը կատարելով գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա՝ Ա. Սողոյանը հպանցիկ անդրադառնում է նաև հրատարակված նկարներին. «Երեխաներին հասցեագրած հիմնական հաղորդագրությունը պարբերականի նշանային համակարգում դրսևորվում է նաև կերպարվեստի լեզվով: Կերպարակերտման այն օրինաչափությունները, որ հեղինակը պահպանում էր գեղարվեստական երկերում, գործում են նաև այստեղ: Տղաները նկարներում մեծ մասամբ պատկերվում են տանից հեռու, արկածների մեջ, մինչդեռ աղջիկները կերպավորվում են ծողների հետ, ազգային խնդիրներին վերաբերող գրքեր կարդալիս կամ տնային գործեր կատարելիս»⁴:

Խնդրո առարկա պարբերականում հրատարակված նկարներում առկա է կրկնվող օրինաչափություն՝ **տարածական դաշտում երկու սեռերի կերպարները առանց բացառության գործում են տարբեր թույլատրելի սահմաններում**: Գենդերային տարբերությունները պատկերների համապատկերում չեն սահմանափակվում միայն այդ առանձնահատկությամբ: Մանկական պատկեր-գրքերի նկարները գենդերային հենքի վրա ընդունված է դասակարգել երեք մոտիվներով⁵, և մենք քննվող պարբերականում տպագրված նկարները կներկայացնենք նման բաժանմամբ:

Առաջին մոտիվը դասակարգում է տղա և աղջիկ հերոսներին նրանց կենսաբանական սեռի հատկանիշների հիման վրա, թե ինչ բնածին մարմնական առանձնահատկություններով են օժտված երկուսն էլ: Այս կետը հնարավորություն է տալիս ընթերցող երեխաներին նկարներում տեսնելու իրենց արտաքինի պատկերը կամ այդ պահին՝ մանուկ հասակում, կամ ապագայում՝ ավելի հասուն տարիքում:



Նկ. 1. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 2, էջ 13:

⁴ Նույն տեղում, էջ 34:

⁵ Տե՛ս Mathuvi P. N., Ileri A. M. and others, An Analysis of Gender Displays in Selected Children Picture Books in Kenya, "International Journal of Arts 2012", N 2 (5), էջ 3:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ում հրատարակված պատկերներից այս առումով ուշագրավ է «Ադամ Եւային խաբուիլը» գործին կցված նկարը, որտեղ առաջին մարդիկ պատկերված են մերկանդամ, և ներկայացված են նրանց սեռային-կենսաբանական տարբերությունները: **Սև ու սպիտակի կտրուկ հակադրությունները էական դերակատարություն են ունենում արտահայտելու համար կարևոր գաղափարը: Ծավալները մոդելավորված են բարակ փորագրմամբ, սպիտակ ֆոնի վրա կիսատոների միջոցով ակնհայտորեն նշվում են մարդկային ֆիզուրները, բնության միջավայրը:**



Նկ. 2. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 14, էջ 105:



Նկ. 3. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 22, էջ 105:

գամանքը: Այդ առանձնահատկությունն արտահայտվում է նաև քննվող պարբերականում, որտեղ բոլոր տղամարդիկ ավելի առնական, ուժեղ, բարձրահասակ են պատկերված, մինչդեռ կանայք՝ թույլ ու անպաշտպան:

Իտալական տեսարան հիշեցնող փորագրանկարում (Նկար 2-ում),

Պատկերում հատկանշական է նաև հետևի պլանում երևացող օձի արտաքինը, որն ունի կնոջ հատկանիշներ. դիմագծերն ակնհայտորեն կանացի են, իսկ գլխամաշկը նմանվում է երկար մազերի: Կենդանու մարդակերպ, ավելի ճիշտ՝ իգակերպ պատկերը փոխակերպված ենթատեքստով շեշտում է Եվայի՝ Ադամին խաբելու մեղքը:

Ֆիզիկական տարբերությունների վրա խարսխվող մոտիվի պարագայում հեղինակը կամ նկարիչը առաջնային պլանում են դնում ֆիզիոլոգիական հատկանիշները, ֆիզիկական ուժը՝ տղաներին ավելի թիկնեղ ու ամրակազմ կերպավորելով, իսկ աղջիկներին՝ թույլ ու փոքրամարմին: Եթե սեռային դասակարգման դեպքում որպես բաժանման հիմք է հանդիսանում զուտ կենսաբանական գործոնը, ապա այս պարագայում կարևորվում է հոգեբանական հնարավոր ազդեցությունը. ֆիզիկական ուժի և կազմվածքի գերակայությամբ շեշտվում է կնոջ՝ տղամարդու պաշտպանության կարիքն զգալու հան-

օրինակ, տղամարդն իր վրա է վերցրել ընտանիքը նավով տեղափոխելու պարտականությունը, իսկ կինը հանդես է գալիս մոր կերպարով և խնամում է երեխային: Այս աշխատանքի հեղինակը հմտորեն օգտագործել է առաջին պլանի ընդգծված սև ու սպիտակի հակադրությունները, մինչդեռ հետևի պլանի ասին ու շինությունները օդային են, կիսատոնային:

Երկշաբաթաթերթի բոլոր նկարներում պահպանվում է այս օրինաչափությունը. տղամարդիկ կերպավորվում են ուժի գերակա գիտակցությամբ, կանայք՝ համեստության՝ հանդես գալով երկրորդ պլանում:

Միակ նկարը, որտեղ երկու սեռերի ֆիզիոլոգիական հարաբերության նժարները փոխվում են, «Չար Պետրոսը» պատմվածքին կից պատկերներից մեկն է:

Տղամարդիկ օրինաչափորեն հանդես են գալիս ուղիղ մեջքով՝ ձիգ կանգնած, մինչդեռ կանայք նրանց կողքին ավելի թեքված են, համեստ: Նկար 3-ում, սակայն, այդ դերերը փոփոխված են: Տասնյակ տարիներով տնից հեռացած Պետրոսն իր մորից ծնկաչոք ներում է հայցում. տղան թեք մեջքով է, մայրը՝ ուղիղ:

Պարբերականում սեռային ֆիզիկական նկարագիրը փաստորեն փոփոխվում է՝ տարիքի գործոնով պայմանավորված. եթե տղամարդիկ հասարակության մեջ կատարած դերով բարձր են կանանցից, ապա տարիքային հարաբերության առումով բարձր է առավել մեծահասակը, այս դեպքում՝ մայրը:

2. Սեռի գենդերային գործոնը

Նկարների՝ գենդերային հենքի վրա դասակարգման հաջորդ մոտիվը վերաբերում է կերպարների գենդերային դերերին՝ մարդու գործունեության հասարակական, քաղաքական, ազգային, ընտանեկան ոլորտներում:

Մանկության տարիներին երեխաները «սկսում են ձևավորել այն ընկալումը, թե ինչպիսին պետք է լինեն տղամարդն ու կինը, ինչպես է հասարակությունը դասակարգում մարդկանց և այն գենդերային դերերը, որ իրենք խաղում են: Նրանք խորացնում են իրենց հարաբերությունները խաղերի, զբաղմունքների և մասնագիտական դերերի գենդերային կողմերի հետ»⁶:

Այն նկարները, որ պարբերաբար տեսնում են մանուկները, ազդում են նրանց հետագա կյանքի վրա և՛ մասնագիտական, և՛ անհատական առումներով: Պարբերականի նկարներում կերպավորված աղջիկ ու տղա հերոսներն



Նկ. 4. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 19, էջ 145:

⁶ Trepanier-Street M. L., Romatowski J. A., The influence of Children's Literature on Gender Role Perceptions: A Reexamination, "Early Childhood Journal", vol. 26, N 3, 1999, p. 155.



Նկ. 5. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 7, էջ 53:

այս առումով տարբերվում են մի շարք առանձնահատկությունների հիման վրա, և տարբերակիչ հատկանիշներ են դառնում **տարածական հարթությունը, շրջապատող առարկաները և դրանց համատեքստում՝ կատարած գործառույթները:**

Նկարագարդումները բաժանված են երկու տեսակի՝ խոշոր, բազմաֆիգուր, տպագրված ամբողջ էջում, և փոքր՝ կենցաղային տեսարաններով: Վերջինս կարծես երեխաներին հատկապես դյուրընկալելի էր թվում: Այս աշխատանքները ծանրաբեռնված չեն մանրակրկիտ նկարագրություններով, առավել պարզ են, պատկերազարդ:

Տարածական այս հարթության պլանում տղաները սահմանափակում չունեն. նրանք

գործում են տանը, փողոցում, ջրային տարածության մեջ և այլն, իսկ աղջիկները հետևողականորեն կերպավորվում են տանը, այգում կամ ծնողների ներկայությամբ (հմտ. նկ. 4 և 5):

Տարածական այս խտրականության մեջ առանցքային են նաև այն առարկաները, որ շրջապատում են հերոսներին: Արական սեռի անձինք հանդես են գալիս գործիքների, զենքերի համատեքստում, կատարում են ֆիզիկական աշխատանք: Խմբագիրների ընտրած պատկերներում տղամարդը կերպավորվում է ժամանակային տարբեր հատույթներում. յուրաքանչյուր դարաշրջան պարտադրում է իրեն բնորոշ առարկայական տարածք, որը հետևողականորեն «տղամարդկային» է:



Նկ. 6. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 21, էջ 65:



Նկ. 7. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 10, էջ 73:

Գեղարվեստական այլ մոտեցում ենք նկատում պատմական և առասպելական տեսարաններում, որոնք հիշեցնում են Մխիթարյան միաբանության կողմից 1885 թ. ֆրանսերենով հրատարակված՝ Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» նկարագարդումները: Իտալացի հմուտ գրաֆիկների աշխատանքները (Չաստ, Ֆուգարո, Կանելլա) կրում էին 18-րդ դարի դասական

նկարչության տարրերը: Այս աշխատանքներում հատկապես ընդգծված են տղամարդու կամքն ու արիությունը: Նկար 6-ում, օրինակ, կերպավորված է Արամ Հայկազյանն իր ժամանակաշրջանին բնորոշ զենքերով՝ նետ ու աղեղ, նկար 7-ում՝ Պապ թագավորը՝ թրի ընկերակցությամբ, իսկ նկար 8-ում 19-րդ դարում ապրող երկաթագործ պատանի է՝ համապատասխան գործիքներով:

Տարբեր են ժամանակները, տարբեր են և առարկաները, բայց պահպանվում է դրանց «առնականության» հանգամանքը:

Աղջիկները, ի տարբերություն տղաների, շրջապատված են «կանացի» իրերով՝ գրքեր, գոգնոց, թել ու ասեղ, ընտանի կենդանիներ, մաքրություն անելու գործիքներ և այլն: Գրքերը, ի դեպ, պատկերված են միայն աղջիկների ձեռքերում, և կարդացող կանայք երկշաբաթաթերթի համապատկերում մեծաթիվ են (նկ. 9):

Եթե տղաներին խմբագիրները սովորեցնում են ֆիզիկական աշխատանք կատարել ու գումար վաստակել, ապա աղջիկները, հրատարակված պատմությունները կարդալով ու նկարներին նայելով, սովորում են տնային գործեր անել: «Ընտանիքն այն կառույցն է, որտեղ երեխաները տնային գործերի նկատմամբ պատասխանատվություն են ձեռք բերում»⁷: Պարբերականի պատկերների մեծ մասում ավագ սերնդի ներկայացուցիչները կրտսեր սերնդին դասեր են տալիս. յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ սեփական փորձը փոխանցում է իր հաջորդին:

Գենդերային ուսումնասիրությունների ամերիկացի մասնագետներ **Փ. Զրարն ու Դ. Մարսիանոն**, ուսումնասիրելով 1990–2009 թթ. հրատարակված մանկական ստեղծագործությունները, եզրակացնում են, որ աղջիկ հերոսներն առավել հաճախ կերպավորվում են տնային տնտեսությանը վերաբերող առարկաների կողքին, մինչդեռ տղաները հարաբերվում են «ոչ տնային առարկաների հետ»: Հետազոտողների կարծիքով, սակայն, այդ հարա-



Նկ. 8. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1878, N 13, էջ 101:



Նկ. 9. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1876, N 14, էջ 108:

7 Cordero-Coma J., Esping-Andersen G., The Intergenerational Transmission of Gender Roles: Children's Contribution to Housework in Germany, 2017, "Journal of Marriage and Family", N 80(2), p 3.



Նկ. 10. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1877, N 12, էջ 89:



Նկ. 11. «Թատրոն. բարեկամ մանկանց», 1877, N 12, էջ 89:

բերությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է, ինչի արդյունքում փոփոխության են ենթարկվում նաև կերպավորվող հերոսների գենդերային դերերը⁸:

Ինչպես արդեն նշեցինք, երկշաբաթաթերթի հերոսուհիները շրջապատվում են «կանացի» առարկաներով, հերոսները՝ «տղամարդկային»: Հանդեսի երկու նկարներում, սակայն, այդ օրինաչափությունը խախտվում է:

«Կարմիր Վարդուկը» հեքիաթին կից նկարում գայլը կերպավորված է տատիկի զգեստներով, տատիկի անկողնում, ասել է թե՛ «կանացի միջավայրում»: Այդ կերպափոխումը, սակայն, փոխաբերական իմաստ ունի, և այս պարագայում գայլի հագուստները գենդերային համատեքստ չունեն⁹:

Հաջորդ բացառությունը «Զարման խաթուն» գործին կից պատկերն է (նկ. 11), որտեղ տղան շրջապատված է «կանացի առարկաներով»: Նկարում փոքրիկ Գէորգը Զարման տատիկին օգնում է ձեռագործ անել: Այս պարագայում խախտվում են գենդերային դերերը, և փոքրիկը «աղջկա գործառույթ է ստանձնում»։ Նա հպարտությամբ պահում է թելը, մինչ տատիկը գործում է: Գենդերային դերերի խախտման տեսանկյունից հատկանշական են նաև հետին պլանում կատարվող գործողությունները: Գէորգի ընկերները դռան հետևից նայում են տղային ու ծաղրում: Նրանք պատկերի համապատկերում ներկայաց-

նում են հասարակության ճնշող արձագանքը ոչ սովորական երևույթների, այս պարագայում տղայի տնային գործ կատարելու հանդեպ:

Անփոփելով կարող ենք ասել, որ «Թատրոն. բարեկամ մանկանց»-ը երեխաներին դաստիարակելու տեսանկյունից մի յուրօրինակ նշանային համակարգ է, որի յուրաքանչյուր խորհրդանիշ տարր պատանի ընթերցողին է հասցեագրում որևէ ասելիք: Նկարներն այս կառույցում հանդես են գալիս

8 Crabb P. B., Marciano D. L., Representations of Material Culture and Gender in Award-Winning Children's Books: A 20-Year Follow-Up, "Journal of Research in Childhood Education", 25. 04. 2011, 390-398.

9 Տե՛ս Մակարյան Ա. Ա., Սողոյան Ա. Վ., Հանրահայտ մի հեքիաթի փոխադրության հետքերով. Շառլ Պերրո, Գրիմ եղբայրներ, Հակոբ Պարոնյան, «Վէճ», Եր., 2017, N 4 (60), էջ 137:

որպես գենդերային դաստիարակության բանալիներ, որ ակնառու կերպարներով փորձում են ցույց տալ մանուկներին՝ ինչպես պետք է գործեն տղան ու աղջիկը:

Տղաների գործառույթները պարբերականի համապատկերում ավելի շատ են. խմբագիրները նրանց հատկացնում են գործողությունների առավել լայն շրջանակ՝ կերպավորելով վերջիններիս պաշտպանի, օժանդակողի և գործողի դերերում:

Տղա կերպարները ֆիզիկապես ավելի ուժեղ են, իրենց վրա են կրում աղջիկներին օգնելու, բարդ գործեր կատարելու գործառույթները:

Արական սեռի հերոսները նկարներում կատարում են ծանր աշխատանքներ, շրջապատված են ֆիզիկական աշխատանքի գործիքներով՝ «առնական իրերով»՝ սուր, նետ ու աղեղ, մուրձ, դագճահ և այլն:

Ի հակակշիռ արական սեռի՝ աղջիկները ֆիզիկապես ավելի թույլ են պատկերված, համեստ են ու հանգիստ, ունեն տղամարդու պաշտպանության և օգնության կարիքը:

Սահմանափակված են նաև իգական սեռի կերպարների գործողության շրջանակները. նրանք գործում են տան և այգու սահմաններում:

Պարբերականում հրատարակված նկարներում աղջիկները շրջապատված են գրքերով ու տնային տնտեսությանը վերաբերող իրերով՝ թել ու սսեղ, ավել և այլն:

Արման Ա. Մակարյան – ունի տպագրված գիտական երկու հոդված. հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական կերպարվեստը և ընդհանրապես մշակույթը:

Summary

THE GENDER BASIS OF PICTURES PRINTED IN THE PERIODICAL “THEATRE: A FRIEND TO CHILDREN”

Arman A. Makaryan

Key words – gender upbringing, child – reader, children’s press, images, girls, boys, biological gender, physical differences, role penetrations.

The article is dedicated to the gender study of pictures printed in “Theatre: A Friend to Children”. In the course of the study the children’s periodical is observed as a peculiar semiotic system addressed to children in which the image-units inform the reader about their models of gender upbringing. The girl and boy characters embodied in the pictures are the examples of self-identification, “ideal heroes” who must be imitated.

The boys are strong, masculine, doing physical jobs and have undertaken the function of protecting the weak ones, while the girls have put on their shoulders the burden of housework and are standing beside the men with dropped heads

and in modest posture. In the pictures of the periodical this plot model becomes an acting pattern from which only one hero is deviating, that is, Gevorg who has got “a girl’s function”.

Резюме

ГЕНДЕРНАЯ ОСНОВА КАРТИНОК, ОПУБЛИКОВАННЫХ В ЖУРНАЛЕ «ТЕАТР: ДРУГ ДЕТЕЙ»

Арман А. Макарян

Ключевые слова – гендерное воспитание, читающий ребенок, детская пресса, изображения, девочки, мальчики, биологический пол, физические различия, ролевые проникновения.

Статья посвящена гендерному анализу картинок, опубликованных в журнале «Театр: друг детей». Детский журнал рассматривается в исследовании как адресованная детям своеобразная знаковая система, изображения которой предлагают читателям свои модели гендерного воспитания. Изображенные на картинках герои – девочки и мальчики, являются примерами самоопределения, «идеальными героями», которым надо уподобляться.

Мальчики сильные, мужественные, они выполняют физическую работу и берут на себя функцию защиты слабых, а девочки берут на свои плечи заботу о доме и с опущенными головами скромно стоят рядом с мужчинами. Эта содержательная модель картинок журнала становится функционирующей закономерностью, от которой, однако, отклоняется один герой – получивший «функцию девочки» Геворг.

REFERENCES

1. **Makaryan A. Al.**, Haykakan vagh’uc mor’acvac’ mankakan mi parberakani “tarorinak” nkarazardumnerə (“Avetaber tgh’ayoc hamar”), "Hayagitakan handes", Ye’r., 2018, N 3 (41) **(in Armenian)**.
2. **Makaryan Al. A., Sogh’oyan A. V.**, Hanrahayt mi heqiat’i p’oxadrut’yan hetqerov: Charl Perro, Grimm Ye’ gh’bayrner, Hakob Paronyan, “Vem”, Ye’r., 2017, N 4 (60) **(in Armenian)**.
3. **Sogh’oyan A. V.**, Dastiarakut’yan xndirnerə Hakob Paronyani mankakan parberakanum, “Banber Ye’revani hamalsarani”, Ye’r, 2018, N 3 (27) **(in Armenian)**.
4. “T’atron. barekam mankanc”, semimonthly magazine, Constantinople, 1876, N 2 **(in Armenian)**.